ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, հեռ. 010-596-125

№ 12/316 «16» 10 2025թ.

ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ ՍՊԸ
(ՀՎՀՀ 08287363)
ՀՀ Ք. Երևան, ԿԻԵՎՅԱՆ Փ. / Շ / 8 / 62 ԲՆ. ԱՐԱԲԿԻՐ 0028
էլ. հասցե՝ ' sopranoarm@gmail.com

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին

ՀՀ ներքին գործերի նախարարության (Այսուհետ՝ Գնորդ) և «ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի (Այսուհետ՝ Վաճառող) միջև 01.07.2025թ. կնքված ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/ԱԽ-4 ծածկագրով գնման պայմանագրի 1.1-րդ կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված և նույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրի համաձայն՝ մասնակիցը մատակարարման փուլում պետք է մատակարարեր 1-6 չաբաժնով ներկայացված տպագրական սարքերի մասեր–պարագաներ:

Պայմանագրով նախատեսված ապրանքները պետք է մատակարարվեին ըստ նշված ժամկետների, սակայն «ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ապրանքները չեն մատակարարվել:

Պայմանագրի 2.1 կետի 2.1.1 ենթակետի համաձայն՝ ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի և 2.1.2-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք, ապա պատվիրատուն իրավունք ունի չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը:

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:
Պայմանագրի 2.1.7.1-րդ կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Վերոնշյալով պայմանավորված՝ Վաճառողը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, այն է՝ Պայմանագրի 2.1 կետի 2.1.1 ենթակետի համաձայն ապրանքը չի մատակարարել:

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 4-րդ ենթակետի՝ պայմանագիր կնքած անձի (կատարողի) ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պայմանագրով սահմանվում են տույժեր և տուգանքներ: Տուգանքի չափը չի կարող պակաս լինել պայմանագրի ընդհանուր գնի 0,5 տոկոսից:

Համաձայն Պայմանագրի 2.1.7-րդ կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է Պայմանագիրը: Մատակարարի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ մատակարարված ապրանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին կամ/և մատակարարը խախտվել է ապրանքի մատակարարման ժամկետը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ -ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 8.11-րդ կետը՝ ՀՀ ներքին գործերի նախարարությունը միակողմանի ամբողջությամբ լուծում է ՀՀ ՆԳՆ և «ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի միջև կնքված թիվ ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/ԱԽ-4 ծածկագրով Պայմանագիրը: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի ամբողջությամբ լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

«ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին տրվում է 5 օրացուցային օր 352.568/երեք հարյուր հիսուներկու հազար հինգ հարյուր վաթսունութ/ ՀՀ դրամ տույժը և 135.818 /հարյուր երեսունհինգ հազար ութ հարյուր տասնութ/ ՀՀ դրամ սահմանված տուգանքը և ՀՀ ՖՆ գործառնական վարչության 900005028106 հաշվեհամարին վճարելու համար, ինչպես նաև տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարներից որպես որակավորման ապահովման գումար 4.074.525 /չորս միլիոն յոթանասունչորս հազար հինգ հարյուր քսանհինգ/ ՀՀ դրամ և պայմանագրի ապահովման գումար 2.716.350 /երկու միլիոն յոթ հարյուր տասնվեց հազար երեք հարյուր հիսուն/ ՀՀ դրամ փոխանցել ՀՀ ՖՆ գործառնական վարչության 900008000664 հաշվեհամարին:

Վճարման կտրոնների բնօրինակներն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ՆԳՆ, ք. Երևան Նալբանդյան 130 հասցեով:

Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով՝ «ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի տվյալները կներկայացվեն լիազոր պետական մարմին:

Ա. ՖԻԴԱՆՅԱՆ

Գնումների համակարգման բաժին

Կատ.՝ Ա. Խաչատրյան
Հեռ. /010/ 59 67 89